

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2141 6  
ԱՍԹԽՎ ՑԵՎ ՀԱԽՎ ՊԵԶԼ-ԱՎԿԻԵՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵԶԼ-ԱՎԿԻԵՔԻՄ ԽՍԴՄ-Ի ԽԱՂԱՋ ԱՇԽԱ-  
ՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՏՏՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Կ

№ 11

Վ. ԼԵՂՆԱՏՅԵՎ

ՀՐԱԶԴԱՅԻՆ ԽՄԲԱԿ  
ՅԵՎ  
ՆՐԱ ԿԵՐՈՒՅՎԱԾՔԸ

«ՊԵԶԼ-ԱՎԿԻԵՔԻՄ»-Ի ՀՐԱՑՈՐՈՎԱՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ

1930

ՀԱԽՆ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ  
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

Կող.

1. Ա. Բաղդասարյան—«Առվորիք ուղմական գործը	25
2. ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ բանական կեց ողաշ-քիմիական պաշտպանության խմբակներ (ծրագիր և կազմա- կերպչական խնդիրներ)	10
3. Լիտովցիլ—«Ճեխնիկան պատերազմում»	13
4. Բանահեղեր ՀԱԽՆ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ Հայաստանյան 2-րդ համագումարի	5
5. Ռոզանով—«Խ՞նչ և ի՞նչպես պետք է անել մողելիսու- ների խմբակներում»	10
6. Վ. Ցելովին—«Աղավնիները ուղմական ծառայության մեջ»	10
7. Ա. Բելով—«Ինչպես սովորել Հրացանով ճիշտ կրակել	10
8. Ա. Բաղդասարյան—«Հայկական Դիվեղիայի անցյալից»	20
9. Քիմիայի զակոսք Յա. Ֆիշման—«Քիմիան ժողովր- դական անտեսության և պաշտպանության մեջ»	15
10. Մրագիր Հետեակի Լին աստիճանի ուղմական գիտե- լիքների խմբակների	10

ԲՈՒԺԻՆ ՅԵՎ ՀՄԻՆ : Պ"ՁԲ-ՇԱՀԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին համարությունը կազմվել է 1912 թ-ի հունվարի 10 օրինա-  
ցանցի ընտանիքի կողմանից պատճենագործություն է առաջարկվել:


No. 11

623.555

A 1  
4983

Վ. ԼԵՂՆՏԵՎ

# ՀՐԱԶԴԱՅԻՆ ԽՄԲՈՎՔ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱՇՔ



«ԳՐԱՀԱՆՈՒՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

፩፻፲፭፻፯፷

1930

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՏՐԱՎԱՐԱՆ

Գառաջեր թ 511

Գևառքեպղինվար 2848 (բ)

Տիցած 2000

# ԽՆՉՈՐԴԻ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԱՎՈՐՄԵՐԸ ՊԵՏք Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Խորհուրդների Համամիութենական 111 համար  
գումարը վորոշել եւլոր ռանհրաժեշտ և խիստ ընդարձ  
ձակ կերպով ծավալել ռազմական և ռազմաքաղաքա-  
կան գիտելիքները բանվոր և գլուղացի բնակչության  
մեջ և մանավանդ լերիտաստրդության մեջ:

Ինչու համար և այդ պահանջվում:

1) Նրա համար, վորպեսզի Խորհրդավին Միու-  
թյան բոլոր աշխատավորներն առանց բացառության  
կարողանան հարկ լեղած դեպքում վոտքի կանգնել՝  
զենքը ձեռքներին պաշտպանելու հոկտեմբերիան նը-  
գաճումները:

2) Նրա համար, վորպեսզի կարելի լինի պահա-  
նեցնել ռազմական ծախքերը, վորպեսզի կարելի լինի  
վորքան կարելի չե քիչ կարել բանվորներին և գլու-  
ղացիներին խաղաղ աշխատանքից:

Կարմիր բանակը մեղ մոտ կընտավելով հասել և  
560 հազար մարդու: Այս քանակը կազմում է համաշ-  
խարհալին պատերազմից առաջ ցարական ժամանակ  
լեղած զորքի մի լերբորդ մասը: Յերկը զինված ու-  
ժերի մեծ մասը վեր և տծված ռազմական ուսուցման  
կարծ ժամկետներ ունեցող լերկրավին սիստեմի: Մեզ  
մոտ 240 հոգի բնակչությանն ընկնում է մեկ զինվո-  
րական, մինչդեռ Լեհաստանում 80 մարդուն ընկնում  
է մեկ զինվոր, իսկ ֆրանսիայում 60 մարդուն՝ մեկը:  
Մեր Կարմիր բանակը խաղաղ ժամանակ հանդիսա-  
նում է իրբե մի կորիզ, վորի շուրջը պատերազմի  
ժամանակ պետք է հավաքվեն բոլոր բանվորա-գլու-  
ղացիական ուժերը, Կարմիր բանակը խաղաղ ժամա-

նակ մի բռունցք և, վօրը պետք և կանգ առնել տա  
միայն թշնամու առաջին հարձակումը։ Դրանից հետո  
սյատերազմին պետք և մասնակցեն Միության բոլոր  
աշխատավորները և բոլոր նրանք, վորոնք ընդունակ  
են զենքի։ Մեր թշնամիները քնած չեն նրանք ան-  
գաղար ուժեր են կուտակում սեր գեմ։ Ուստի հաս-  
կանալի իւ, վոր յուր աքանչուր բանվոր և գուրզացի  
պետք և պատրաստ լինի հարկ յեղած մոմե տին խո-  
ղաղ քաղաքացուց դպուսալու մարդիկ։

Բազմական տեխնիկան ներկայումս ուժեղ և  
և բարձրադան, սակայն և այնպես պատերազմում գըլ-  
խավոր տեղը բանում և մարդ մարտիկը, իսկ նրա  
զլիսավոր զենքերից մեկն են հանդիսանում հրացանը  
և գնդացիը։ Աշդ զենքը ճանաչեն ու նրանով ան-  
վրեալ կրակելը և թշնամուն ուժգին հարվածել կարո-  
ղանալը—մարտիկից պահանջվող ամենակարևոր պայ-  
մաններից մեկն եւ։

Անշնորհք հրաձգի ձեռքում հրացանը հանդիսա-  
նում և վոչ թե իրբե զենք, այլ ավելի շատ մի ծանը  
ընու։ Թշնամու համար հաճախ ափելի վտանգավոր և  
մեկ լավ հրածիղը, քան տասն-քսան վատ հրածիղը։  
Տեսնելով արդարիսի հրածիդների դատարկ հրածգու-  
թունը, թշնամին վոչ միայն նրանցից և նրանց զեն-  
քից այլևս չի վախենա, այլ ընդհակառակն կվողեվոր-  
վի, նրա տրամադրությունը և գեպի իր ուժերն ունե-  
ցած հավատը կրարձրանա։

Բացի զրանից, վատ հրածիդներն իգուր գնդակ-  
ներ արձակելով, վատնում են ժողովրդական հարըս-  
տությունը, թուլացնում յերկրի տնտեսական հզո-  
բությունը, առաջ բերելով մարտապաշարի միջոցների  
ավելորդ վատնումներ։ 1914—1919 թ. թ. համաշխար-  
հաշին պատերազմի ընթացքում յուրաքանչյուր սպան-

զածի և վիրավորվածի համար բաց ե թողնվել միջին  
հաշվով 1+ փութ արճին, կամ 24 հազար հատ գնդակ  
(նկատի ունենալով, վոր լուրաքանչյուր գնդակը քա-  
շում ե 2<sup>1</sup>/<sub>4</sub> մախալ): Այդ նշանակում ե, վոր լուրա-  
քանչյուր 24 հազար գնդակից հարկ լեղած տեղին դի-  
պել ե միմիայն մեկը, իսկ մնացածները վրիպել են:  
Ահա թե վորքան միջոցներ են տրվել քամուն:

Դիպուկ կրակել սովորելը հեշտ բան չե: Այդ  
այնքան ավելի հեշտ ե կատարվում, վորքան ավելի  
սեր և ցանկություն ե լինում զեպի հրաձգությունը:  
Լավ հրաձիգները բնածին չեն լինում, մեղանից լու-  
րաքանչյուրը կարող ե լավ հրաձիգ դառնալ: Միբերի  
գյուղացիները, վորոնք բանակ են՝ մտնում, լավ հրա-  
ձիգներ են դառնում վոչ թե այն պատճառով, վոր  
նրանք հենց ալղպես ել ծնված են, այլ այն պատճա-  
ռով, վոր նրանցից շատ շատերը զենքեա փոքր հասա-  
կից սկսում են պարապել վորսորդությամբ, վոքր հա-  
սակից սկսում են սիրել հրաձգությունը և նրանում  
վարժվել:

Ահա թե ինչու հրաձգային գործի պրակտիկ ու-  
սումնասիրությունը ե վորսորդության զարգացումը  
մեր Միության բանվորագուղացիական բնակչության  
մեջ պետք ե մեծ տեղ զրավեն լերկը պաշտպանու-  
թյան համար տեղի ունեցող ընդհանուր պատրաս-  
տության և բնակչության մեջ ռազմական զիտելիք-  
ներ տարածելու գործում:

Այն լերկներում, վորտեղ իշխանության գլուխ  
են կանգնած կապիտալիստները, այսինքն ապազալի  
մեր թշնամիները, այդ արդեն վաղուց են հասկացել  
և հրաձգալին սպորտին, այսինքն գործով հրաձգու-  
թյունն ուսումնասիրելուն՝ այնտեղ արդեն մեծ ու-  
շազրություն են դարձնում: Ներկայումս չկա մի լեր-

կիր, վարտեղ հրածգալին գործը բանակից դուրս չու-  
սումնասիրվի: Անհաստանում, Ռումինիայում, Թրան-  
սիայում, Անդլիայում, Գերմանիայում և այլ լերկրնե-  
րում քաղաքացիական ընտելչության, մանավանդ  
բուրժուազիայի մեջ գոյություն ունեն հագարավոր  
հրածգալին ընկերություններ և միություններ, վորոնց  
նպատակն եւ պատերազմի դեպքում բանակի համար  
լավ հրածիդները պատրաստելը:

Դրանցից լեռ չմնալու և հարկ լեղած դեպքում  
մեր ազգագլա թշնամի բուրժուական բանակներից ա-  
վելի թուլլ չլինելու համար, մենք պետք եւ ավելի ու-  
ժիղ կերպով զարգացնենք մեզ մոտ հրածգալին գոր-  
ծը, ուժեղացնենք և աջակցենք խրճիթ-ընթերցարան-  
ներին և բանվորական ակումբներին կից մեր հրա-  
ծգալին խմբակները:

Այդ հրածգալին խմբակները հանդիսանում են  
Միության աշխատավորների ներսում մարտական ու-  
սումը զարգացնելու գլխավոր միջոցներից մեկը, սա-  
կայն նրանք իրենց նպատակին կհասնեն այն ժամա-  
նակ միայն, չերք մեր լայն մասսաները կամովին  
կաշխատեն ամենաջներմ մասնակցությունն ունենալ  
նրանց աշխատանքում:

Հրածգալին խմբակի առաջ դրվում են հետևյալ  
ինդիքները՝

1) Հրածգության վարժությունների միջոցով  
պատրաստել խմբակալիններից անվտանգ և ճարակիկ  
հրածիդներ.

2) Ուսումնասիրել այն հրածգալին դենքը, վո-  
րով դիսված եւ Կարմիր բանակը.

3) Մանոթանալ այն բանին, թե ինչպես եւ գոր-  
ծադրվում հրածգալին դենքը մարտում,

4) Խմբակի լուրջ և պործնական աշխատանքի միջոցով աշխատավորների ավելի լայն մասսաների մեջ ստեղծել հետաքրքրություն դեռևի հրաձգալին ըստուրը.

5) Կատարելագործել լեզվալին զորամասերի փոփոխիկների գիտելիքները, վոր ձեռք են բերել նըրանք հավաքների ժամանակ:

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԱԿ

Հրաժանակին խմբակները գլուղում պետք է կազմակերպվեն խրճիթ-ընթերցարաններին կից: Կոմիտերի տականները, պահեստի հրամանատարական կազմը, դորացրված կարմիրորան ակադեմինները, փոփոխիկները և նախակոչիկները սաղմական անկյան վարչիչի և իրճիթ-ընթերցարանի վարիչի զեկավարությամբ պետք է ձեռնամուխ լինին իրենց պյուղի հրաժանակին խմբակի կազմակերպմանը: Աշխարտանքը սկսելու համար բավական է, վոր լինի խմբակի անդամներից հետաքրքրվողների և աշխատել ցանկացողների մի փոքրիկ խումբ: Յեթև աշխատանքը խմբակում լավ դրված լինի, այնուհետեւ նա ինքը կքաշի իրեն նաև ուրիշներին:

Ի՞նչ է հարկավոր, վորակեսղի խմբակը կարողութան հաջող կերպով աշխատել:

Ամենազվարկվորը, վորն ոգնելու լե խմբակին ոգոտակար աշխատանք կատարելու ան ե, վոր լիբարակի բոլոր անդամները պետք է զահաղրդութեան և ձգտեն կատարել խմբակի առաջ զրված խնդիրները: Ընկերականությունն ու աշխատանքի մեջ փոխադարձաբար միմյանց ոգնելու հանգամանքը պետք է զիտակցի լուրաքանչյուր խմբակավար: Սակայն այդ դեռ բավական չե, խմբակում պետք է հաստատի

կարգապահություն, ազսինքն, վոր խմբակի անդամները ճշտորեն կատարեն իրենց պարտականությունները Ամեն մի աշխատավոր պետք ե հիշի պատերազմի անխուսափելիությունը. պետք ե հիշի, վոր ինքը պարտավոր ե պարագաստվել այդ պատերազմի համար, վոր Կարմիր բանակի շարքերում, ուսուցման կարճժամանակամիջոցին, ամեն բան հաստատ կերպով չես կարող լուրացնել, վոր անհրաժեշտ ե ռազմական ունակությունները պատվաստել և ամրացնել միշտ և ամենուրեք: Նրա վրա զրվում ե մեծ և պատվավոր խնդիր. նա հանդիսանում ե խորհրդակին իշխանության պաշտպանը:

Պաշտպանության գործի համար ել ավելի սկտիվ և ուշադիր պետք ե լինի խմբակի լուրաքանչյուր անդամը նա հանդիսանում ե մյուս բոլոր աշխատավորների համար իբրև առաջնորդ և որինակ:

Յերկրորդը՝ խմբակում ամբողջ աշխատանքը պետք ե կառուցված լինի գործնականորեն, այսինքն գործով և վոչ թե խոսքերով կամ գրքերով: Վոչ թե պլակատները և պատերին քաշ արած զենքի տեսակները պետք ե ծառալին հրաձգային խմբակի աշխատանքի գլխավոր տեղը, այլ նրա ձգարանը (հրաձգության շենքը) — լինի այդ սենյակում, թե բաց և բարկնքի տակ: Վորքան կարելի լե հրաձգության մասին խոսակցություն պետք ե քիչ ունենալ, ամենից շտա պետք ե ցուց տալ, թե ինչպես պետք ե հրաձգություն կատարել կոտորակներով, սակավալիցք և ըստ հնարավորության նաև մարտական գնդակներով:

Յերրորդը՝ անհրաժեշտ ե, վոր կուսակցության և կոմիերիտմիության տեղական քջիջները, քաղլուսվարը, գլուղիսորուրդը, արհեստակցական միությունները, ՊԱՀԸ-Ավիաքիմի բջիջները և այլ կազմակերպություն-

ները ամեն տեսակի ոգնություն ցուց տան հրաձգությն խմբակին։ Ալդ ոգնությունը պետք է արտահայտվի պարապմունքների համար խմբակին տեղ, անհրաժեշտ սարքավորում հատկացնելու, ծեռնարկներ և գրականություն ձեռք բերելու մեջ ոգնություն ցուց տալու, հրաձգարան կառուցելու, հրաձգային անկյունը սարքավորելու համար դրամական ոգնություն ցուց տալու և խմբակի մասին հոգ տանելու մեջ։

Ի՞նչպես պետք է անցնել հրաձգությն խմբակի կազմակերպմանը։

Ենթե խմբակը չի կազմակերպվում ՊԱԶԲ-Ավիաքիմի կողմից, իրեք կազմակերպիչ, այսինքն հրաձգությն խմբակի կազմող՝ պետք է հանդիսանանարձիթ-ընթերցարանի կամ ուսումական անկյան վարիչը։ Անցնելով հրաձգային խմբակի ստեղծելուն, խրճիթ-ընթերցարանի վարիչն ամենից առաջ դիմում և տեղական կուսակցական և կոմիերիտական բջիջների և գուղխորհրդի կուլտ-լուսավորական սեկցիայի ոգնությանը, խորհրդին և ոժանդակությանը։ Նրանց ոգնությամբ ընտրվում է խմբակի ժամանակավոր բլուրո բաղկացած լերեք անդամից՝ խրճիթ-ընթերցարանի կամ ուսումական անկյան վարիչից (նախագահ) և լերկու անդամից։ Նրանցից մեկը կուսակցական և կոմիերիտական բջիջների ներկայացուցիչն ե, խիլ լերկորորդը գլուղխորհրդի կուլտ-լուսավորական սեկցիայի ներկայացուցիչը։ Այսպիսով ժամանակավորապես ստեղծված բլուրոն գոյություն և ունենալու մինչև խմբակի լիակատար ձևակերպումը, այսինքն մինչև առաջին ընդհանուր ժողովը և ընտրություններ կատարելը, ժամանակավոր բլուրովի պարտականու-

թլունների մեջ և մտնում խմբակի հիմքը դնելը, ար-



Զրույց հրաձգային անկյունում,  
զեկամբը բացտորում է, թէ ինչպես և թոշում նեռը  
սինքն ամբողջ նախապատրաստական աշխատանքը  
կատարելը։ Այդ աշխատանքը կատանալու յի մոտավո-  
րապես նրանում, վորպիսի կարելի լինի՝

1) Կառջ հաստատել տեղական հասարակական  
կազմակերպությունների հետ, այսինքն գլուղխորհրդի,  
ՊԱՀԸ-Ամբաքիմի ըջիջի, արհմիության, կոռպերացիո-  
նի հետ և այլն և դիմել նրանց ոգնությանը.

2) Կատարել խմբակի անդամների սկզբնական  
ցուցակագրությունն.

3) Գունել հրաձգարտն և հրաձգային անկյունն  
կառուցելու տեղ.

4) Ձևոք բերել առաջին անգամ անհրաժեշտ  
ձեռնարկներն ու դրականությունը.

5) Ընտրել պարագմունքների զեկավայրները.

6) Ծուցակագրել խմբակը Փիղիկական կուլտուրայի շրջանակին կամ ռայունական խորհրդում (Փիղիկական կուլտուրայի խորհրդում—ՇՀանուլին կամ ռայունական գործկոմին կից գործություն ունեցող մի մարմին ե, վորը հսկում և բնուկչության մեջ Փիղիկական կուլտուրա անցկացնելուն).

7) Նախապատրաստել և անցկացնել խմբակի անդամների առաջին ընդհանուր ժողովն ու մշտական բուլրուի ընտրությունները:

Ժամանակավոր բուլրուի տէղ աշխատանքը պետք է ընթանա նախնապես կազմված ծրագրով, բուլրուի լուրաբանչուր անդամ պետք է իր վրա վերցնի ծրագրով վորոշ աշխատանք. որինակ՝

ա) Նախագահը (խրճիթ ընթերցուրանի վարիչը կամ ռազմական անձնան վարիչը) ոլետք և իր վրա վերցնի նախապատրաստական աշխատանքի, զեկավայրությունը, պարագմունքների համար զեկավայրներ ընտրելն ու հրավիրելը, սկզբնական անհրաժեշտ ձեռնարկներ ու դրականաւթյունն ձեռք բերելը, հրածացմին խմբակի ցուցակագրությունը Փիղիկական կուլտուրայի շրջանակին վամ. ռայունական խորհրդում, նրանից վարժական դենք պահանջելը.

բ) Բլուրուի անդամը կուսակցուիան և կոմիերիտական թիջների ներկայացուցիչն ե,—խմբակի անդամների ընդունելություն, տեղի հաստրակական կազմակերպությունների հետ կազ ստեղծելը, դրամական և նկութական միջոցներ ճարելը.

գ) Բլուրուի անդամը գրաւդխորհրչի կուլտուր լուսավորական սեկցիայի ներկայացուցիչն ե,—հրածագալին խմբակի աշխատանքի համար տեղ ճարելը,

հրաձգաբանի կտորուցումը, նրա սարքավորումը, հրաձգալին անկան կռուցմն ու սարքավորումը:



### Հրաձգություն դաշտում

Աշխատանքների ալգայիսի բաժանում կատարել, չի նշանակում, թե բյուրոյի յուրաքանչյուր անդամ ինչ ցանկանա, կարող ե ինքնուրուցն կերպով կատարել: Ամեն ինչ պետք ե նախապես արժանանա բյուրոյի ամբողջ կազմի քննությանը, սակայն բյուրոյի անդամների միջև անհրաժեշտ ե փոխադարձ համաձայնություն և ոգնություն հենց աշխատանքի ընթացքում:

Բացի դրանից, նախապատրաստական աշխատանք կատարելու, այսինքն հրաձգաբան, հրաձգալին անկյուն և ալին, կառուցելու և սարքավորելու համար պետք ե աշխատանքի կոչել խմբակի մեջ մտնող բոլոր անդամներին և պահեստի հրամկազմին:

Եերբ ամբողջ նախապատրաստական աշխատան-

ԵՇ վերջացած կլինի, արսինքո իերը կտուղված կլինի  
հրաձգարանը, սարքավորված կլինի հրաձգալին ան-  
կունը, իերը բերված կլինեն ամենաանհրաժեշտ ձեռ-  
նարկները, պատրաստ կլինեն պարապմունքների դե-  
կավարները,—խմբակը կարող ե սկսել իր պարապ-  
մունքները:

Խմբակի անդամների առաջին ընդհանուր ժողո-  
վում ընտրվում ե մշտական բյուրո, բաղկացած Յ-Յ  
անդամից: Մշտական բյուրոն ժամանակավոր բյուրո-  
վից ընդունում ե բոլոր գործերն ու զույգը և այնու-  
հետեւ արդեն ինքն ե զեկավարում խմբակը: Շատ լավ  
կլինի, վոր բյուրովի անդամների սեջ լինեն պահեստի  
հրամանատարներ:

Հրաձգակին խմբակի մշտական բյուրովի պար-  
տականությունների մեջ ե մտնում հետեւյալ աշխա-  
տանքը.

1) Ընդունել նոր անդամներ, խմբակի ընդհա-  
նուր ժողովի վորոշմանն արժանացնել կարդապահու-  
թյունը խախտելու և ալլ վարչունքի պատճառով  
խմբակից դուրս անելու խնդիրները.

2) Հոգ տանել խմբակային զույգի պահապահման  
մասին, ձեռք բերել անհրաժեշտ ձեռնարկներ և գրս-  
կանություն և կատարել ամեն բանի ճիշտ հաշվառում.

3) Հոգ տանել դրամական և նշութական միջոց-  
ներ ճարելու մասին, ընդունել մուտքի վճարներն ու  
անդամավճարները և ծախսել աբդալիսին խմբակի  
կարիքների համար ընդհանուր ժողովի վորոշման հա-  
մաձայն.

4) Վորոնել և հրավիրել պարապմունքների դե-  
ստավարներ, հաստատել պարապմունքների ծրագիրն  
և դասացուցակը.

5) Կաղմել աշխատանքների պլանը և ներկացնել  
անդամների ընդհանուր ժողովի հաստատմանը.

6) Հոգ տանել պարապմունքները ճիշտ հիմքերի  
վրա դնելու և դեպի ալդ պարապմունքները անդամ-  
ների կողմից ունենալիք հարկ յեղած վերաբերմունքի  
մասին:

7) Մշտապես սերտ կապ պահպանել խրճիթ-ըն-  
թերցարանի վարչչի և հասարակական բոլոր կազմա-  
կերպությունների հետ, խրճիթ-ընթերցարանի աշխա-  
տանքի ընդհանուր պլանի մեջ մտցնելով խմբակի  
պարապմունքների պլանը:

Ենք հրաձգալիին խմբակը կտզմակերպված և  
ՊԱԶԼ-Ավիաքիմի բջիջի կողմից, ալդ դեպքում նա  
զեկավարվում և ՊԱԶԼ-Ավիաքիմի հրահանգներով:

## ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

Հրաձգալիին խմբակի անդամներ կարող են լինել  
միմիայն աշխատավորները: Կուլակներին, առեւրա-  
կաններին և նրանց նմաններին հրաձգալիին խմբակ-  
ներում տեղ չկատ Դրանց մենք չենք կացող վստա-  
հել մեր բանվորագուղացիական յիրկրի պաշտպանու-  
թյան գենքը: Ահա թե ինչու խմբակի անդամներ ըն-  
դունելու դորժին անհրաժեշտ և մոտենալ զգուշու-  
թյամբ:

Խմբակի անդամների ցուցակագրությունը պետք  
է կատարի բյուրովի անդամներից մեկը, վորպեսզի  
պատահականորեն խմբակի մեջ չընկնեն այնպիսինե-  
րը, վորոնք նրա մեջ տեղ չունեն: Դրվածների ցուց-  
ակը բյուրովի անդամը ներկայացնում և բյուրովի

նիտոին, վորը քննում ե և վերջնականացնալես հասացառում և ընդունվածներին:

Մուս կողմից խմբակ մտնող ամեն մեկից պահանջվում ե, վոր նա իսկապես պարապի հրաձգալին գործի ուսումնասիրությամբ: Բավական չե խմբակի անդամ զրվել, պետք ե աշխատանքի նվիրվել, պետք ե միշտ լինել որինակելի խմբակալին: Անդամները ընդունելիս ալդ ամենը պետք ե նկատի ունենալ Պետք ե ինչպես հարկն և բացատրել բոլոր խմբակ մտնողներին, վոր նրանց վրա զրվում են վորոշ պարտականություններ, վոր ցանկության դեպքում միշտ և ամբողջովին կարելի լե կատարել:

Ալդ պարտականություններից գլխավորներն են՝

1) Միշտ և ժամանակին հաճախել խմբակի ժողովներին:

2) Յենթարկվել թե՛ ընդհանուր ժողովի, և թե՛ խմբակի բյուրովի վորոշումներին,

3) Ռւշապիր լինել խմբակի պարապմունքներին, ճշտապահությամբ կատարել արված դասերը, աշխատել միշտ պարզել այն ամենը, ինչ վոր այնքան ել հասկանալի չե.

4) Խնայողաբար վերաբերվել և լավ պահել խըմբակի գուցքը, ուսումնական ձեւնարկները և զենքը.

5) Ծառապահությամբ միարել ընդհանուր ժողովի սահմանած անդամավճարները.

6) Լինել ամեն տեսակետից գործունյա և որինակելի խմբակալին:

7) Պաշտպան կանգնել իր խմբակին, միշտ հոգատանել նրա հաջող աշխատանքի և բարեշինության մտաբին,

8) Խմբակի աշխատանքի մեջ քաշել նոր անդամների, աշխատել բոլոր աշխատավորներին շահագրգռել իր աշխատանքով:

Ենք բոլոր անդամները կատարեն իրենց պարտականությունները, այդ ժամանակ միայն կարելի կլինի սպասել և լավ արդյունքներ խմբակի աշխատանքից:

Խսկ այն անդամները, վորոնք ճշտորեն չեն կատարի իրենց պարտականությունները, միմիայն խանդարած կլինեն խմբակի աշխատանքին: Մկզբում նըրանց վրա պետք է ազդել ընկերաբար, նըրանց հետ խոսել, բացատրիլ նըրանց սխալները: Ենք այդ ել չոգնի, լավ կլինի նըրանցից ազտովել, այսինքն դուրս դցել խմբակի անդամությունից ընդհանուր ժողովի միջոցով:

## ՀՐԱԶԴԱՅԻՆ ԽՄԲԱԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԴ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՏՆԵԼԸ

Խմբակում աշխատանքն սկսելու համար անհրաժեշտ է հրաձգարան, անհրաժեշտ են զանազան ձեռնարկներ և գրականություն: Մի քանի բաներ, ինչպես մենք հետապայում կտեսնենք, խմբակին մատակարարում են համապատասխան մարմինները, սակայն շատ ու շատ բաներ պետք է ձեռք բերել իր միջոցներով:

Ի՞նչ միջոցներ կարող են լինել խմբակում և վո՞րտեղից պետք է վերցնել դրանց:

Ենք այդ խնդրին հրաձգային խմբակը հարկ լրացրությունը չդարձնի, այդ աշխատանքից վոչ մի լավ բան սպասել չի կարելի: Չի հաջողվի

Նույնապես միանգամբց շատ միջոցներ դաշնել, ուստի  
չպետք է հուսահատվել, այլ պետք է սկսել թեկուղ  
փոքրից:

Ամենից առաջ պետք է խմբակի ընդհանուր ժո-  
ղովի վորոշմամբ խմբակի անդամների համար սահ-  
մանել փոքր վճարներ, վորոնք պետք է դուշանան  
մուտքի վճարից, այսինքն այնպիսի վճարից, վոր  
մուծվում է մեկ անգամ անդամ զանալիս և անգա-  
մավճարից, վոր մուծվում է վորոշ ժամանակի համար:  
Խմբակի լուրաբանչուր անդամ պետք է համեստա,  
վոր տանց դրան գործ գլուխ գուլ չի կարող:

Թե անգամակցական և անգամավճարի ինչ չափ  
պետք է վորոշի ինքը, խմբակը, այսինքն անդամների  
ընդհանուր ժողովը, այսուամենախիմ այդ վճարները  
չպետք է բարձր լինեն, վորոպեսպի առեն մեկը կարո-  
դանու վճարել և առենքի առաջ բաց լինի ձանագար-  
նը գեղի խմբակը: Շատ լավ կլինի, թթե մուտքի վը-  
ճարը կարելի լինի վորոշել 30-50 կ. չափավ և անգա-  
մավճարները՝ 10-15 կոպեկ ամսական: Հենց այդ կո-  
պեկներն ել հանդիսանում են խմբակի համար իրեն  
ոկրնական կատարալ:

Միջոցներ ճարելու ցերեկորդ ազրուրը—տեղա-  
կան կազմակերպությունների որհությունն է: Կըուզ-  
իորհրդի ոգնությամբ պետք է զանձում կոտարել  
տեղական կազմակերպությունների (զբուղարհուրդ,  
կոուպերացիոն, փոխոգնության կոմիտե և այլն) միջին  
բաժնեզրության թերթերով: Այնուհետև պետք է  
տեղական քաղլուսվարի ուժերով կազմակերպել վճա-  
րովի ներկայացում-իրեկոներ հոգուա համագալին  
խմբակի և այլն:

ՀԱՅՈ ԴՇ. ՀԱՅՈՒՍ ՀԵՐ  
ԿԵԼՏՐՈՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ Ն 2  
ԳՐԱԴԱՐԱՆ

Վերջապես յերրորդը, վորք պետք և նկատի ունենալ, այդ վճարովի հրաձգություններ անցկացնելն է: Յերբ հնարավոր և, լավ և սահմանել յուրաքանչյուր արձակյունի կամ գնդակի համար վճար: Յեթև թույլ և արվում հրաձգություն կատարել խմբակի վոչ անդամներին, արդ դիպրում նրանցից ավելի վճար պետք և վերցնել, քան խմբակի անդամներից:

Մի քանի մարմիններ, ինչպիսին են՝ զյուղիորենուրդը, կոռպերացիան, փոխոգնության կոմիտեն և այլն, կարող են խմբակին անհրաժեշտ սպառությունը ցույց տալ նյութերով (հրաձգաբանի կառուցման համար անստուանլութ, տաշած փակութեան ձեռնարկներ պատրաստելու համար և այլն): Բացի դրանից, խմբակը խրճիթ-ընթերցաբանի աշխատանքի ծրագրի մեջ մտնելով կարող և նկատի ունենալ խրճիթ-ընթերցաբանի աշխատանքի համար բաց թողնովիք վարող գումարները:

## ԻՆՉՊԻՍԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՄԲԱԿԻՆ ՅԵՎ ՎՈՐՏԵՂԻՑ ՊԵՏՔ Ե ՎԵՐՑՆԵԼ ԱՅԴ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Առանց հրաձգության գործնական ուսումնասիրության ձեռնարկներ ունենալու, հրաձգային խմբակի գոյությունն իմաստ չունի: Հրաձգային-խմբակին ձեռնարկներն անհրաժեշտ են այսպիս, ինչպես զյութանը, ցաքանը և վերջապես լեզը զյուղացուն ինչպես զյուղացին: Վորք չունենալով այդ ամենը, չի կարող բական իր հոգի ծշակությունը և տեսնել իր աշխատանքի պատուցները, այնպիս ել հրաձգային խմբակը անհրաժեշտ ձեռնարկներ չունենալով չի կարող աշխա-

առանքի անցնել և կատարել իր առաջ պրված խնդիրները։ Այն բոլոր ձեռնարկները, վոր ցանկալի լե, վոր խմբակն ունենա, միանուամից ձեռք բերել հնարավոր չեւ



Արտաքին տեսքը



Կարգած տեսքը

Կոտորակով ճրածղությունն կատարելու  
անոթ՝ փափակի ձեռք

Ձեռքի մետաղն  
շուցիչ՝ ճշշտ նշանաւթյունն  
ստուգելու համար

Դրա համար եւ սկզբում պետք է կանգ առնել ամենաանհրաժեշտի վրա, այն հուսով, վոր քերը խըմբակն ավելի ամբանա և հայտատանա, աստիճանաբար բոլորն եւ ձեռք կըերի։

Խմբակին անհրաժեշտ ըովոր ձեռնարկները կարելի յեւ բաժանել յերեք խմբի՝ 1) այն ամենը, ինչ վոր կարելի յեւ ստունաւ քաղցւակազմակերպությունից և փիզիուրուրակի խորհրդից, 2) այն ամենը, ինչ վոր պետք է զննել խմբակի միջոցներով և 3) այն ամենը, ինչ վոր կարելի յեւ պատրաստել իրեն խմբակի ուժերով։

Ստորեւ բերվում և ձեռնարկների սրբնակելի ցուցակը: Հիմնական ցուցակի մեջ մտնում են հենց իր աշխատանքի առաջին որերից նոր կազմակերպված խմբակին անհրաժեշտ գլխավոր ձեռնարկները, առանց դրանց նա չի կարող անցնել պարապմունքների: Իր աճման և նյութական դրության բարելավման հետ միասին ձեռնարկների քանակին աստիճանաբար պետք է մեծանա: Լրացուցիչ ցուցակում ցույց տրված ձեռնարկները և գլխավորապես փոքր տրամաշափի հրացանների և նրանց համար գնդակների ձեռք բերելը, նույնպես շատ ցանկալի լին հենց սկզբից: Մականդրա համար ամեն խմբակ ել միանդամից չի կարող միջոցներ գտնել: Պետք ե սպասել, սակայն և միաժամանակ ձգտել հետագալում ձեռք բերել՝ ինչ ել վորդինի:

### ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

ա) Ձեռնարկներ, վոր կարելի չե ուսանալ

- 1) Վարժական հրացաններ 2—3
  - 2) Հրածացին դրականություն հնարավոր քանակով
- Ֆիզկուլտուրայի շրջանային և սացնական խորհրդից:
- Թըճիթ ~ լնոթերցարանի վարիչի միջոցներ շրջանային կամ սացնական քաղլուսովարից:

բ) Ձեռնարկներ, վոր անհրաժեշտ և ձեռք բերել խմբակի միջոցներով


- 1) Կոտորակով հրածացություն կատարելու առողմներ 2—3 հատ:
- Միջին արժեքը չորս քանչյուր հատին 2ու 50 կոտ.

- 2) Կոտորակ 2 կիլո: Կիլոն 1n. 50 կոպ.  
 3) Պատիճներ (1000 հատ) 1 տուփը 2 ոռոք.  
 4) Մետաղե նշավակներ  
(ընկնող) կոտորակով հրա-  
ծություն կատարելու հա-  
մար . . . 2—3 հատ:  
 5) Մետաղե ցուցիչներ միա-  
կերպ նշանառության սովո-  
րեցնելու . . 2—3 հատ:  
 6) Վարժական 3 գծանի  
փամփուշաներ 15—20  
հատ:  
 7) Որտոսկոպներ նշանա-  
ռությունն ստուգելու  
համար 2—3 հատ:  
 8) Հրաձգալին կանոնադր-  
քեր 2—3 կոմպլեկտ: Կոմպլեկտը մոտ 2 ռ.  
     դ) Զեռնարկներ, զոր կարող են պատրաստվել  
իրեն խմբակի ուժերով
- 1) Նշանառության հաստոց-  
ներ 1—2:  
 2) Ավաղի արկղ 1  
 3) Ցուցազրական հատիկ-  
ներ: }  
 4) Թղթե նշավակներ: } Հնարավոր քանակով:

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿ

- 1) Սմիբնսկի սիստեմի փո-  
քըր տրամաչափի հրա-  
ցաններ 1—3 հատ:  
 2) Փոքր տրամաչափի հրա-  
ցանների գնդակներ 500  
—1500 հատ:  
 3) Կրուղիկովի սիստեմի  
նշանառության հատ-  
առոցներ 1—2 հատ:
- Հատը 42 ոռոքի  
 Հատը 1n. 50 կ. մինչև 6 ոռոք:  
 Հատը 12 ոռոքի:

Համաձայն կառավարության վորոշումների Կարստիր բանակի սպառազինման համար չգործածվող տիպարի հրացաններից կարող են տալ ըուրաքանչյուր շրջանալին կամ ռախոնական դործկոմին կից ընդած ֆիղկուլառուրալի խորհուրդները, իսկ արդ գործկոմներըն արդեն իրենք բաժանում են ակումբների և խըրճիթ-ընթերցարանների հրաձգալին խմբակների միջն։



Հաստոց Կրուղմիկովի սիստեմով կրակել  
սովորելու համար

Հրաձգալին խմբակի բլուրովին անհրաժեշտ է խրճիթ-ընթերցարանի վարիչի միջոցով՝ զիմում ներկայացնել ֆիղկուլառուրալի տեղական խորհրդին, վորը պարտավոր ե տալ հնարավոր չափով վարժական հրացաններ, իսկ այդպիսիները ըինելու դեպքում պահանջել ֆիղկուլառուրալի (գավառական, մարզային կամ նահանգական) հաջորդ բարձրագույն մարմնից։

Ինչ զերաբերում և հրաձդալին գրականությանը, արդպիսին խրճիթ-ընթերցարանի վարիչը ողահանջում և ռալոնական կամ շրջանալին քաղլուսվարից նույն կարգով, ինչպես առհասարակ խրճիթ-ընթերցարանի համար ամեն մի գրականություն:

Հրաձդալին խմբակի միջոցներով ձեռք բերելիք ձեռնարկները կարելի լե տմեն մի քաղաքում ել գնել վորսորդական խանութներից, Պետհրատի դրախանութներից և նրանց ռազմական բաժիններից:

Ի հարկ և չպետք ե կանդ առնել միմիայն այն ձեռնարկների վրա, վորոնք այս ցուցակում ցուց են արված: Այնն ինչ կախված ե լինելու այն բանից, թե վորքան միջոցներ ունի խմբակը: Այսա՛նց ցուց են արված միմիայն հիմնական ձեռնարկները, առանց վորի խմբակի աշխատանքը դժվար կլինի:

Սակայն ինչպես վարվել այն ձեռնարկների նը-կատմամբ, վորոնց հարկավոր և պատրաստել իր միջոցներով:

Այսա՛նց դժվար վոչինչ չկա, անհրաժեշտ և մի-այն խմբակի անդամների ցանկությունն ու կոլեկտիվ գործակցությունը Հավանարար խմբակի անդամների մեջ կզտնվեն այնպիսիները, վորոնք փոքր ի շատե ծանոթ կլինեն փայտագործական և ատաղձագործա-կան աշխատանքին: Հենց դրանց ոգնությամբ ել կա-րելի կլինի նշանառություն սովորեցնելու համար պատ-րաստել հասարակ փայտ և հաստոցներ, ավազի արկղ, ցուցադրական նշավակներ և այլն:

Բացի դրանից, Երբ խմբակն սկսի իր պարագ-մունքները, ցուցադրական ձեռնարկների մի մասը պարագմունքների կարգով կարող են պատրաստել խմբակի անդամները:

Եաւ ձեռնարկներ պատրաստել, նշանակում և  
միաժամանակ կատարել նաև հրածգալին գործի վո-  
րեւ խնդրի ուսումնասիրություն։ Որինակ՝ լերկաթա-  
լարից դնդակի թոփչքի ճանապարհներ (հետազծեր)  
պատրաստել, արձակվունեների ցրման որենքը նկարել  
և այն։

## ՀՐԱԶԳԱՐԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Մենք արդեն ասացինք, վոր առանց կենդանի  
և գործնական աշխատանքի հրածգալին խմբակի գո-  
յությունը միտք չունի։ Հրածգարանը, այսինքն շենքի  
մեջ կամ բացովիրա այն տեղը, վորտեղ կատարվում է  
հրածգությունը, հանդիսանում է խմբակի զվարացու-  
մեխը, այդ նրա սիրտն ե, առանց վորի խմբակը մե-




Հրածգարանի հառակադիրը 2 կիլ սենյակներով  
ուժը կլինի։ Ահա թե ինչու ժամանակավոր բյուրովի և  
ընդհանրապես ամբողջ խմբակի առաջին մտահոգու-

Բլունը պետք եւ լինի հարմար տեղ գտնել և ալնտեղ  
հրաձգարան կառուցել և սարքավորել։ Սկզբնական  
շրջանում ուժից վեր կլինի լիակատար սարքավորու-  
մով և բոլոր հարմարություններով հանդերձ լավ հրա-  
ձգարան պատրաստել։ Այդ պատճառով ել պետք եւ ըս-  
կրում հաշտվել հասարակ կառուցվածքին և հարմա-  
րություններին, հույս ունենալով, վոր լերը խմբակն  
ամրանա, հարստանա, իր համար ել լավ հրաձգարան  
կկառուցի։

Հասարակ կառուցվածք ունեցող հրաձգարանն  
առանձնապես շատ միջոցներ չի պահանջում։ Գլխա-  
վորապես պահանջմում եւ նլութեղեն (տախտակներ,  
փայտ, մեխեր և ալլն), իսկ բանվորական ուժը՝ ինքը  
խմբակն ու իր անդամներն են։ Այդպիսի հրաձգարան  
կարելի յեւ պատրաստել շենքի մեջ և բաց լերկնքի  
տակ։ Անհրաժեշտ ե, վոր շենքն ունենա 16-20 քայ-  
լից վոչ պակաս լերկարության մի միջանցք (վորքան  
տվելի, այնքան լավ) կամ նույն լերկարությամբ սեն-  
լակներ, վորոնք միացած լինեն իրար լայն դռնով։ Վեր-  
ջապես կարելի յեւ ոգտագործել լերկար սրահը և ալլն։  
Միջանցքի, սենյակի կամ սրահի մի ծալրում հարթ արկղի  
(ինչպես արկղը ապակու տակից) նման պատրաստվում  
ետախտակներից կրկնակի վահան։ այդ արկղի քարձ-  
րությունը պետք ե հասնի մինչեւ առաստաղը (միջակ  
քարձրության շենք ունենալու դեպքում), լայնու-  
թյունը պետք ել լինի 5—6 արշին, այնպես, վոր այն  
վալրը, վորտեղից հրաձգություն ե կտարարվելու, չերևա-  
այն պատը, վորի մոտ վահանը դրված ե, ալլապես գըն-  
դակները հանկարծակի կարող են կպչել պատին։

ЩЕБЕНЬ, ИЛИ ПЕСОК С КАМНЕЙ,  
ЗАДЕРЖИВАЮЩИЙ ПУЛЬКИ



Նշավակներ կպցնելու և գնդակներ բռնելու վահան

Այդ հարթ արկղ-վահանը պետք է ունենա յերկու քառորդ  
հաստության ծավալ և ամբողջովին լցված լինի խճով  
կամ ավաղախառն մանր քարով։ Վահանը ծառայում է  
այն բանին, վորի վրա պետք ե փակցնենք նշաններ  
(նշավակներ) և նրանց խփենք, և ծառայում ե պատը  
վնասվելուց և զնդակներով ծակվելուց պաշտպանելու  
համար։ Հրաձգությունը միմիայն կոտորակով կատա-  
րելու դեպքում, բավական ե պատրաստել նույն մե-  
ծության մի տակ վահան, այսինքն վոչ թե խճով կամ  
ավաղով լցված արկղի ձևով, այլ մեկ, մեկ և կես մատ-  
նաչափ հաստության տախատկի կողցրած մի վահանո

Հրաձգության իսկական տեղը, այսինքն կը ակի գիծը, պատրաստվում և միջանցքի կամ կից սենյակի հակառակ ծալրում: Այստեղ ցանկալի չե պատրաստել ցանցանման մի միջնորմ, վորից են կողմը չի թուշւատըրդում անցնել դժբախտ դեպքերից խուսափելու համար:

Բացո՞թյա հրաձգաբան պատրաստելիս անհրաժեշտ և խրճիթ-ընթերցարանի բակում կամ մի ալ համար վայրում մի այնպիսի տեղ ընտրել, վորտեղից հարավոր լինի 30—50 քայլ և ավելի հեռավորության վրա հրաձգություն կատարել: Բացի դրանից անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները, արձակունները պետք և ուղղված լինեն վորեե քարե կամ վայտից պատրաստած հաստ պատի (բանջարանոց, սրահ և ալյն), վորպեսզի հրաձգությունը շրջապատի մարդկանց համար լինի անվտանգ (փողոցների, հարեւան բակերի և այն անվտանգություն): Դըրանից անկախ այնտեղ, ուր արձակուններն են ուղղվելու, անհրաժեշտ և պատրաստել վահան աշնան, ինչպես սենյակի հրաձգաբանում: Հրաձգության ժամանակ կողքերքում պետք և խմբակի անդամներից առաջացնել մի շղթա, վորը թուզ չտա անց ու դարձ անող քաղաքացիներին մոտենալու այդ վայրին: Բացի դրանից ամենից լավ կլինի, վոր այն սահմանները, վորոնցից ես կողմը չի կարելի անվտանգ կերպով ման գալ նշանակել դրոշտկներով:

Բացի հրաձգաբարանից, հրաձգային խմբակի համար անհրաժեշտ և խրճիթ-ընթերցարանին կից ունենալ հրաձգային անկյուն:

Հրաձգային ասկլանը պետք է հատկացվի հատուկ տեղ (անկյուն, սենյակի մի մասը, իսկ լեթե հնարավոր և նաև՝ առանձին սենյակ):

Սարքավորմտն ժամանակ անհրաժեշտ և հիշել  
մի բան,—վոր հրաձգալին անկյունը հանդիսանում է  
հրաձգալին խմբակի համար իրեն պարապմունքների  
տեղ, և վոչ թե պլակատներով լի հրաձգալին ձեռնար-  
կների համար իրեն ցուցահանդես կամ թանգարան:  
Չպետք և նույնպես հրաժարվել հրաձգալին անկյու-  
նը համապատասխան լոգունգներով զարդարելով, վո-  
րոնք ավելացրած ուսումնական սարքավորմանը՝ ար-  
տաքին շուրջ և գրավչություն են տալու:

Հրաձգալին անկյունում պետք է կենարոնացած  
լինեն՝ վարժական զենքը, անոթները, ցուցադրական  
ձեռնարկները, հրաձգալին աղյուսակ—պլակատներն ու  
գրականությունը: Այստեղ նույնպես անհրաժեշտ է ու-  
նենալ գրատախտակ և կամին, նստարաններ և պա-  
րապմունքների սեղան:


## ՀՐԱՁԳԱՅԻՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այժմ մենք համարուտակի քնննենք այն խնդիրը,  
թե ինչպես պետք է կատարվի աշխատանքը խմբա-  
կում: Խմբակի անելիքները մենք արդեն պարզեցինք:  
Դրանք մեզ այն լեզրակացության բերեցին, վոր պետք է  
յուրաքանչյուր խմբակալին դառնա անվրեսլ, ճարպիկ  
և գիտակից հրածիգ: Այդ ամենին հասնել կարելի յէ  
պարապմունքների և հրաձգության փորձի միջոցով:  
Վորպեսզի այդ պարապմունքները արդյունք ունենան,  
հարկավոր և ունենալ պարապմունքների վորոշ կարգ:  
Զի կարելի ինչով և ինչպես ասես պարապել պետք  
և գիտենալ, թե ինչից պետք է պարապել սկսել, ինչ-  
պիսի պըիտմներ պետք և ուսումնասիրել այսոր, ինչ-  
պիսի պըիտմներ վաղը և այն: Ահա այդ ամենի հա-  
մար ել կազմվում և ծրագիր և պարապմունքների ժա-

մացուցակ։ Մրադիլը ցուց է տալիս, թե հատկապես  
ինչ պետք է ուսումնասիրել, իսկ ժամացուցակը ցուց  
է տալիս, թե իրբ հատկապես և ինչով պետք է ըզ-  
րադղել։

Խմբակում կլինեն տարբեր մարդիկ, կլինեն այս-  
պիսիները, վորոնք դեռևս բոլորովին ծանոթ չեն հրա-  
ձդությանը և լերբեք ձեռքները զենք չեն առել. կլի-  
նեն նախակոչիկներ, վորոնք քիչ թե շատ զիտու-  
թլուն արդեն ձեռք են բերել վարժական կալաննե-  
րում։ Վերջապես կլինեն լերկրալին զորամասերի փո-  
փոխիկներ և նախկին կարմիր բանակալիններ, վորոնք  
ավելի պատրաստված են, ունեն վորոշ փորձ և զի-  
տություն։ Յերկրալին զորամասի փոփոխիկի կամ  
նախկին կարմիր բանակալինի համար այնքան ել հե-  
տաքրքիր չի լինի պարապել այնպիսի բանով, վոր  
արդեն ինքը լավ զիտե։ Ընդհակառակն, խմբակի այն  
անդամին, վորը լերբեք ձեռքը զենք չի առել, անհրա-  
ժեշտ և ուսումնասիրել հրաձգության ամենահասա-  
րակ լեղանակները—անհրաժեշտ և ծանոթանալ հրա-  
ցանի զլխալոր մասերի կազմությանն ու աշխատան-  
քին և ալլն։ Այստեղից պարապմունքները պետք և  
կատարել զանազան ծրագրերով։ Ինչպես փորձն է  
ցուց տվել, խճիթ-ընթերցարանին կից հրաձգալին  
խմբակում պետք է լինեն այդպիսի լերկու ծրագիր։  
Ամբողջ խմբակը բաժանվում է լերկու մասի, վորոն-  
ցից մեկն ավելի պատրաստված ե, իսկ մյուսը պակաս  
պատրաստություն ունեցող կամ առաջին անդամն է  
անցնում հրաձգության գործի ուսումնասիրությանը։  
Խմբակն այդպիսի մասերի բաժանելը պետք և կատա-  
րի բյուրոն պարապմունքները վարելու համար հրա-  
վիրված զեկավարների հետ միասին։

Այսուհետեւ պետք ե խմբակի բոլոր անդամներին բաժանել նաև խմբերի, այսինքն ավելի մասը միավորների։ Խմբում վորքան քիչ լինեն մարդիկ, զեկավարն այնքան ավելի լավ կազարառի նրանց հետ, ավելի հեշտությամբ ցուլց կտա լուրագանչուրին այս կտմ այն լեղանակը կամ կը ացատրի այս կտմ այն խնդիրը։ Սակայն խմբերի և նրանցում լեղած աշակերտների թիվը կախված կլինի նրանից, թե խմբակում պարագմունքների քանի դեկավար ե լինելու։



Պարագմունք հրաձգային խմբակում։ Հաստոցից  
նշանառություն սովորելը։

Ցանկալի յեւ, վոր մեկ զեկավարին միջին հաշվով ընկնի 9—10 մարդ, այստեղից ել՝ խմբերը պետք ե ըստ հնարավորին բաղկացած լինեն նույն ալղթվից։

Իսկ ովքե՞ր են լինելու ալդ դեկավարները։

Այս ամենաողիսավոր խնդիրներից մեկն ե, և մենք այդ մասին պետք ե խոսենք։ Արդեն սոեղծված շատ

խմբակներ, այդ խնդիրը չուժվելու պատճառով դա-  
զարեցրել են իրենց գոլութիւնը և մեր տեսակետով  
միանգամայն իզուր տեղը վոմանք կարծում են, թէ  
խմբակ զեկավարել կամ նրա հետ պարապել կարող  
են միայն կարմիր բանակի զորամասերից լեկած հրա-  
մատնատարները Ի հարկե այդ լով կլիներ: Ատկայն  
մենք դիտենք, վոր այդ ամեն ժամանակ հնարավոր  
չե, Ամեն մի գլուղում կամ դրույաքաղաքում զորա-  
մատ չկա: Շարունակ և մշտապես չեն կարող հրամա-  
տնատարներն իրենց զորամասերից դուրս մեկնել պա-  
րապմունքներ կատարելու համար: Մենք չպետք ե  
հույս դնենք զորամասերի հրամանատարների վրա.  
ինչպես պարապմունքների զեկավարների վրա: Այդ  
զեկավարներին պետք ե գտնել մեղ մոտ՝ գլուղում կամ  
գլույաքաղաքում: Իսկ գտնել կարելի չե, հարկավոր և  
միմիայն ինչպես պետքն ե դրադիել այդ գործով:

Ամենից առաջ հրաձգալին խմբակում իբրև զե-  
կավարներ պետք ե լինեն պահեստի հրամանատարնե-  
րը: Իսկ լեթե գլուղում պահեստի վոչ մի հրամանա-  
տար չկա, այդ գեղգում իբրև զեկավարներ պետք ե  
հրավիրել լերկրալին զորամասերի ամենաշավ պատ-  
րաստված փոփոխիկներին և նախկին կարմիր բանա-  
կալիններին: Կարելի չե այդ գործի համար հրավիրել  
նաև հին բանակում ծառակած նախկին լենթասպաննե-  
րից: Ղեղավարի աշխատանքն արդեն այնքան ել դըժ-  
գար չե և այդ գործը կատարելապես կատարել կարող  
ե լավ պատրաստված փոփոխիկը կամ կարմիր բանա-  
կալինը՝ ստանալով ֆիզկուլտուրալի շրջանալին խոր-  
հրդի կամ ՊԱԶԸ-Ավիաքիմի քջիջի հրահանգչից վորոշ  
ոգնություն: Ղեկավարները խորհուրդներ և ցուց-

մունքներ կարող են ստանալ նաև զորամասերի հրամանատարներից, վորոնք յերբեմն-յերբեմն գլուղ են դալիս: Անհրաժեշտ է, վոր բյուրոն կապվի մոտիկ զորամասի հետ:

Խմբակի բոլոր աշխատանքներում գլխավոր տեղը բռնում է կոտորածկով կամ փոքր տրամաչափի հըրացանների մանր գնդակներով հրաձգություն կատարելը: Հրաձգության հետ միասին խմբակի անդամները պետք ե ուսումնասիրեն զենքը, ծանոթանան հրաձգության կանոններին և հրաձգության յեղանակների մեջ վարժություն ձեռք բերեն (թե ինչպես պելի ճիշտ և լավ կլինի հրացանը կրակելուն պատրաստ անել, ինչպես լցնել հրացանը, ինչպես նշան բռնել և այլն):

## ՄՐՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մրցումներ կաղմակերպելը հանդիսանում է իբրև անփոխարինելի մի միջոց՝ հրաձգալին խմբակի աշխատանքի ամենալավագույն արդյունքներին հասնելու համար: Մրցումների նպատակն է վորոշել, թե խմբակի անդամներից ո՞վ ե լավ կրակում: Յեթե միջոցները թուլլ են տալիս, մրցումներին մասնակցողներից մի քանիսին, վորոնք նշանին լավ են խփել, տրվում են մրցանակներ (այսինքն նվեր՝ հրաձգության համար):

Այս ամենը պակաս չի շահագրգոռում խմբակի անդամներին: Ամեն մեկի մեջ ձգտում է առաջանում առաջնակարգ հրաձիգների շարքն ընկնել և վոչ թե պոչը:

Ալստեղ դեռ հնարավորութիւնն կա մըցանակ ել  
 ստանալու: Խմբակալինների մեջ տեղի լն ունենալու  
 պալքար, սակայն շատ ոգտակար պալքար: Պետք է  
 բլուրոն ալդ պալքարին լավ ուղղութիւնն տա, վոր-  
 պեսզի ալդ պալքարը  
 կոնչների և զանազան  
 տհաճութիւնների առիթ  
 չդառնաւ: Ամեն մեկը  
 կպատրաստվի մասնակ-  
 ցելու մըցումներին, ավե-  
 լի սւշաղիր վերաբեր-  
 մունք կառաջանա դեպի  
 խմբակի ողարապմունք-  
 ները, կակսեն հրածգու-  
 թանն ավելի վարժվելը  
 իսկ ալդ շարունակ  
 կրարձրացնի խմբակի  
 նվաճումները:



Բոլոր խմբակալինն-  
 երին՝ մըցումների մաս-

Բանվոր Շուկայել:  
 Վորը հաղթանակ և տարել Մասկ-  
 վայում 1935 թ. մըցումներին.

սին պետք և հայտնի նախապես:

Մըցումներին պիտի պատրաստվեն նաև նրանք,  
 ովքեր կազմակերպում են այդ մըցումները: Այդ լինե-  
 լու ի՞ն խմբակի բյուրոն պարապմունքների դեկավար-  
 ների հետ միասին:

Մըցանակների մասին պետք և մտածել նախո-  
 րոք: Զպետք և շատ մըցանակներ տալ, բավական և  
 սահմանել լիրկու-լիրեք մըցանակի Մըցանակի արժե-  
 քը կախված և լինելու նբանից, թե վորքան են մի-  
 ջոցները թուլ տալիս ձևոք թերելու մըցանակներ:

Վորքան շատ փող լինի ալդ գործի համար, մրցանակ-ներն այնքան լավ կլինեն: Սակայն պետք է հիշեց զոր միջոցների մեծադույն մասը պետք է արմադրվի խմբակի համար աստիճանաբար անհրաժեշտ ձեռնարկ-ներ գնելուն: Ուստի խմբակի համար աննպատակա-հարմար կլինի թանկագին մրցանակներ գնելու, յեթե անհրաժեշտ ձեռնարկները պակասում են: Իրեւ մրցա-



**Մոսկվայի մոտ տեղի ունեցած հրաձգային մբցումների ժամա-նակ զիտում են նշակալների դիպչումները.**

Կակ կարելի լին գործածել՝ թանկագին ժամացույցներ, փողապանակներ մետաղե մակագրություններով զար-դարված, գրքեր, հրաձգային կանոնագրքեր մակա-

գրութիւններով՝ թե ում են տրվելու այդ գրքերը։  
Վերջապես դրա Խական միջոցները չծախսելու համար,  
լիթե այդ միջոցները քիչ են, կարելի լի լավագույն  
հրածիգներին տալ ուղղակի վկալականները։ Վերջիններու  
պետք և զրված կամ տպված լինեն թանձր և լավ  
թղթի վրա, վորպեսզի կարելի լինի դնել ապակով  
պատաժ հատուկ շրջանակի մեջ։

Մրցանակների կողմից մեծ ոժանդակություն կա-  
րող են ցուց տալ տեղական կազմակերպությունները։  
Պետք և դիմել նրանց սպնությանը, առաջուց նրանց  
հետ խոսել, թե ով, ինչով կարող և ոգնել կարելի լի  
սահմանել հատուկ մրցանակներ ի պատիվ այս կամ  
այն կազմակերպության։ Որինակ, «Մրցանակ Քանա-  
քեռի գլուխսորհրդի անվան կամ «Մրցանակ Քանա-  
քեռի սպառկոպի անվան» և այլն։

Նախասկես պետք և մշակել մրցումների պարման-  
ները, հայտարարել այդ պարմանների մասին խմբակի  
բոլոր անդամներին, վորպեսզի ամեն մեկն առաջուց  
նրանցում վարժություն կատարի։

Այնուհետեւ պետք և սահմանել մրցումների որ և  
վորոշել այն կարգը, վորով պետք և տեղի ունենան  
այդ մրցումները։ Ցանկալի լի մրցությունների որ ընտ-  
րել հեղափոխական տոներից մեկը (Հոկտեմբերյան հե-  
ղափոխության տարեդարձը, Կարմիր բանակի տարե-  
դարձը, Մալիսի 1-ի տոնը և այլն)։

Մրցումներին ըստ հնարավորին ոլետք և տալ  
հանդիսավոր քնությ, վորպեսզի նրանց վրա կարելի  
լինի բնենել վոչ միայն խմբակալինների, այլ և ամբողջ  
գլուղի ուշադրությունը։ Պետք և լոգունդներով զար-  
գարել հրածգարանը, հրածգալին անկյունը, մրցումնե-

Ըստ պետք ե բանալ մի փոքրիկ միտիգով։ Յեթե զիւռ  
դում կան նվազախումբ (որկեստր), պետք այդ ժամա-  
նակ նրան ոգտագործել:

Մըցումներ ցանկալի իւ կաղմակերպել մոտավո-  
րապես լերկուշ-լերեք ասիսը մեկ անգամ։ Յեթե այդ  
մըցումները շատ հաճառ կազմակերպվեն, կդառնան  
սովորություն և դեպի նրանց ունեցած հետաքրքրու-  
թյունը աստիճանաբար կպահասի:


Բացի խմբակի ներսում տեղի ունեցող մըցում-  
ներից, պետք է մըցության կանչել նաև հարեան գլու-  
ղերի խմբակներին։

Արդյոք վո՞ր խմբակը պետք է հաղթի։

Այդ մըցումներին հրաձգալին խմբակից դուրս են  
բերում լավագույն հրաձիգներին։

Կարող են նույնպես մըցումներ կազմակերպել  
վորոշելու ամբողջ շրջանի կամ ուսունի լավագույն  
խմբակը։

Դրանով պետք ե զբաղվեն ՊԱԶԸ-Ալաքիմի բը-  
ջիներն ու Փիզիուտուրալի խորհուրդները։




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039630

[024]

ԴԻՆԸ 12 ԿՈՎ.



В. Леонтьев

Стрелковый кружок

и

его устройство